ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, որը գտնվում է ք.Երևան, Մ.Ադամյան-1 հասցեում, ստորև ներկայացնում է ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԾՁԲ-5 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի արդյունքում 2014թ-ի դեկտեմբերի 30-ին կնքված ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԾՁԲ-5 պայմանագրում 2015թ-ի հունվարի 26-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պայմանագրով սահմանվել է, որ դրանով նախատեսված ծառայության մատուցումը իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման նպատակով 26.01.2015թ. կնքվել է համաձայնագիր: Միաժամանակ ծառայության մատուցման վերջնաժամկետ է սահմանվել մինչև 25.12.2015թ.

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ.Ղազարյանին:

Հեռախոս՝ 011 800 626:

Էլ. փոստ՝ gugks@mail.ru:

Պատվիրատու՝ **ՀՀ ֆինանսների նասխարարություն**

Համաձայնագիր-1
30.12.14թ. կնքված N ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԾՁԲ-5 գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան «26» հունվարի 2015թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավար Ա.Արզումանյանի մի կողմից, և «Այյունեթվորքս» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս ընկերության տնօրեն Ա.Եսայանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 30.12.14թ. կնքված N ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԾՁԲ-5 գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.3-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1.Պայմանագրի 7.1 կետին համապատասխան հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի/կցվում է/:

1,2. Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը սահմանել մինչև 2015 թվականի դեկտեմբերի 25-ը:

1.3. Սահմանել, որ Պատվիրատուն պայմանագրով նախատեսված մատուցված ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն համաձայնագրի հավելվածով սահմանված ժամկետներում, բայց ոչ ուշ քան 2015 թվականի դեկտեմբերի 25-ը:

1.4. 30.12.14թ. կնքված N ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԾՁԲ-5 գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2015 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ֆինանսների նախարարություն	«Այյունեթվորքս» ՍՊԸ
Ք.Երևան, Մելիք Ադամյան 1	ք. Երևան, Տերյան 19-4
ՀՎՀՀ 02591206	ՀՎՀՀ 02588485
Հ/Հ 900011017101	Հ/Հ 19300427854801 00
Հ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար	«Այյունեթվորքս» ՍՊԸ-ի տնօրեն
Ա.Արզումանյան	**Ա.Եսայան**

Հավելված
Հաստատված է
«30» դեկտեմբերի 2014թ. կնքված
N ՀՀ-ՖՆ-ԲԸԱՀ-ԾՁԲ-5
գնման պայմանագրի փոփոխությամբ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը*	Նախատեսվում է ֆինանսավորել 2015թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում											
		փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը Տարի**
«Եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման համակարգ»-ի սպասարկման ծառայություններ	4232	6 317 500	12 635 000	18 952 500	25 270 000	31 587 500	37 905 000	44 222 500	50 540 000	56 857 500	63 175 000	75 810 000	**75 810 000**

* Վճարվող գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ֆինանսների նախարարություն
Ք.Երևան, Մելիք Ադամյան 1
ՀՎՀՀ 02591206
Հ/Հ 900011017101

Հ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար
Ա.Արզումանյան

ԿԱՏԱՐՈՂ
«Այյունեթվորքս» ՍՊԸ
ք. Երևան, Տերյան 19-4
ՀՎՀՀ 02588485
Հ/Հ 1930042785480100

«Կոնվերս բանկ» ՓԲԸ
«Այյունեթվորքս» ՍՊԸ-ի տնօրեն՝
Ա.Եսայան